"Մ Ե Լ Ի Ո Ր Ա Ց Ի Ա" ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

378834 Արարատի մարզ, գ.Հայանիստ, Հեռ. (374 10) 27-38-06, Էլ.փոստ՝ vova-tadevosyan@mail.ru

03.02.14 № 14-4Բ ի պատասխան Ձեր ______________ №______________

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր կազմակերպության միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում <<Մ-ՇՀԱՊՁԲ-1/14>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, գ. Հայանիստ, ՓԲԸ-ի շենք, թիվ 4 սենյակ, մինչև 2014թ. փետրվարի 13-ը, ժամը $11^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Խ. Վարդանյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման օրը, համարը և ժամը:

Հայտերը կբացվեն ՓԲԸ-ի շենքում, թիվ 4 սենյակում, Արարատի մարզ, գ. Հայանիստ հասցեում, 13.02.2014թ. ժամը $11^{00}$-ին: Գնային առաջարկը երկու կամ ավելի արժույթներով ներկայացնելու դեպքում դրանք կհամեմատվեն հայտերի բացման օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Գնման առարկա է հանդիսանում <<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերումը:

<<Մելիորացիա>> ՓԲԸ-ի կարիքների համար բենզինի և դիզելային վառելիքի մատակարարման (որոնք բաղկացած են 2 չափաբաժիններից), տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա/ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված) N 1, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

բ/ գնային առաջարկ (Հավելված) N 2: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

***Մասնակիցները կարող են հայտը ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես բոլոր չափաբաժինների համար: Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումը իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:***

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Մելիորացիա>> ՓԲԸ-ի էլեկտրոնային հասցեն է /vova-tadevosyan@mail.ru/:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/ 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը ՝ մինչև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի /այսուհետ Կարգ/ 110-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և Կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, որով պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալները:

ՏՆՕՐԵՆ Վ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ